



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

533
ԿՈՆՏՆՏԿԵՆՏՐՈՆ

334.6:63

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ
ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ
ՇՐԱՏԱՐԱԿ. № 1774
ԳԼԱՎԼԻՑ 6898(Ք)
ՊԱՅԿԵՐ № 4002
ՑԻՐԱԳ 4000

ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վո-
րոշումը

Կոլտնտեսականներին, ինչպես և մենատնտեսներին ար-
տադնաց աշխատանքի դուրս բերելու համար ԽՍՀՄ-ի
Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական
Կոմիսարների Սորհուրդը վորոշում են.

I

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱԳՆԱՑ ԿՈՂՏՆՏԵՍԱԿԱՆ-
ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սահմանել հետևյալ արտոնությունները այն կոլ-
տնտեսականների համար, վորոնք կոնտրակտացիա յեն
կապում աշխատելու պետական արդյունաբերության
մեջ (այդ թվում՝ փայտամթերման, փայտի դետային
փոխադրման, տորֆի մշակման, ձկնորսության և
այլն), տրանսպորտում, խորհանտեսություններում,
ինչպես և պետական շինարարություններում և սպա-
ռողական ու բնակչինարարական կոոպերացիայի կա-
ռուցողական աշխատանքներում.

1. Արդարաց կոլտնտեսականները լիովին ազատ-
վում են կոլտնտեսությունների հասարակական ֆուն-



2/3

դերին իրենց աշխատավարձից վորևէ հատկացումներ անելուց:

2. Արտազնաց կոլտնտեսականների մասնակցութունը կոլտնտեսութեան յեկամուտի, փողի և մթերքի մասերի բաշխման գործում ապահովելու համար, արտազնաց աշխատանքից վերադառնալիս՝ կոլտնտեսութունում նրանց առաջին հերթին և աշխատանք տըրվում:

3. Կոլտնտեսութունների բերքը բաշխելիս՝ արտազնաց կոլտնտեսականներին մթերավորելու համար անպայման առանձնացվում է բերքի մի մասը սահմանված գներով և այն քանակութեամբ, վորով մթերավորվում են կոլտնտեսութունում բարեխղճորեն աշխատող մյուս կոլտնտեսականները:

4. Արտազնացի ընտանիքից կոլտնտեսութունում մնացած աշխատունակ անդամները կոլտնտեսութեան աշխատանքներին մասնակցում են ընդհանուր հիմունքներով:

Յեթե արտազնացի ընտանիքն իր ունեցած աշխուրներով չի կարող ստանալ անհրաժեշտ քանակութեամբ պարեն և կերի միջոցներ, կամ թե չեն ընտանիքում աշխատունակ անդամներ չկան, ապա բերքը բաշխելիս կոլտնտեսութեան վարչութունը պարտավոր է նրան պարենով և կերի միջոցներով ապահովել նույնպիսի քանակութեամբ, վորքան ստանում են կոլտնտեսութունում բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականները, և նույն գներով՝ կանխիկ վճարով:

Ծանոթութիւն.—Յեթե արտազնացի ընտանիքի անդամները հրաժարվում են կոլտնտեսութունում աշխատելուց, ապա այդ ընտանիքը սույն արտոնութիւնը չի վայելում, իսկ ինքը արտազնացը վայելում է 3-րդ հորվածում նշված արտոնութիւնը:

5. Սահմանված տոկոսային այն հատկացումը, վորը չբաժանվում է կոլտնտեսականների վրա հանրաքննացված գույքին համապատասխան, մյուս կոլտնտեսականներին համահավասար հիմունքներով ամբողջապես տարածվում է նաև արտազնաց կոլտնտեսականների գույքի վրա:

6. Կոլտնտեսական արտազնացների ընտանիքները կոլտնտեսութեան մյուս անդամներին համահավասար վայելում են դեֆիցիտային ապրանքներ ստանալու և անողջապահական բոլոր արտոնութիւնները: Վտրակախորում ձեռք բերելու կամ այն բարձրացնելու նպատակով դպրոցներ, դասընթացներ և այլ ուսհիմնարկներ ուղարկելիս արտազնացների ընտանիքի անդամներին դերպանցութիւն և տրվում:

7. Արտազնաց կոլտնտեսականների ընտանիքները կոլտնտեսութեան այլ անդամներին համահավասար վայելում են կոլտնտեսութեան արձակացութիւնը (բանջարոտոցների մշակման համար ինվենտար, սույլ տրամադրել և այլն):

8. Արտազնաց կոլտնտեսականները պարտավում են տնտեսութեան չհանրաքննացված մասից արվելիք դյուղտնտեսական հարկից, ներառյալ նաև վոչ-հողագործական վաստակը:

9. Տնտեսական մարմինների կողմից արտազնաց կոլտնտեսականների հետ կնքվելիք պայմանագրերում պետք է նախատեսել հետևյալը.

ա) արտազնացներին ապահովել ընակարանով և պարենով.

բ) տնտեսական մարմինն իրական արժեքի չափով պետք է վճարի արտազնացի ուղեվորման ծախքը բնա-



11-266569P

կազմալրից մինչև աշխատավայր և (պայմանագրի ժամ-
կետը լրանալիս) վերադարձի ծախքը:

գ) արտազնացի ճանապարհորդութեան ընթացքի
համար վճարելու որական 2 ո. 50 կ. որպեսզի:

10. Սույն արտոնութեանները վաճառվում են.

ա) այն արտազնաց կոլտնտեսականները, վորոնք
աշխատանքի յեն զնում համապատասխան տնտեսա-
կան մարմինների հետ կնքված պայմանագրերի համա-
ձայն:

բ) այլ կոլտնտեսականներ, յեթե նրանք իրենց
կուսարած աշխատանքի մասին ներկայացնում են արն-
տեսական մարմնից տրված վկայականը:

11. Այն արտազնաց կոլտնտեսականները, վորոնք
կոնտրակտացիոն ժամկետի լրանալուց առաջ աշխա-
տանքից հեռանում են, զրկվում են արտոնութեաննե-
րից:

II.

ՔԱՆՎՈՐ ԱՐՏԱԳՆԱՑՆԵՐ ՍՈՒՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ Ի-
ՐԵՆՑ ԱՆԳԱՄՆԵՐԻ ԱՐՏԱԳՆԱՑ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ
ՈՃԱՆԳԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔՈՂ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻՆ ԽՐԱՆՈՒՍԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Նրախտանքի հետևյալ միջոցները սահմանել այն
կոլտնտեսութեաններին նկատմամբ, վորոնք տնտեսա-
կան մարմինների հետ պայմանագրեր են կնքում բան-
վոր արտազնացներ, առանձնացնելու կամ պետական
արդյունաբերութեանում, տրանսպորտում, խորհրդա-
տեսութեաններում, ինչպես և պետական շինարարու-

թյուններում և սպառողական ու ընկերակառուցման
կոոպերացիայի կառուցողական աշխատանքներում ար-
տազնացների համալրագրմանն ոժանդակելու մասին:

12. Բանվոր արտազնացներ առանձնացնելու կամ
նրանց համալրագրմանն ոժանդակելու մասին տնտե-
սական մարմինների և կոլտնտեսութեանների միջև
կնքվելիք պայմանագրերում պետք է հատկապես նա-
խատեսել, վոր տնտմարմինները կոլտնտեսութեաննե-
րին հատուկ միջոցներ կընձեռեն նրանց արտադրու-
թյունը բարելավելու համար, համաձայն այն կոլտն-
տեսականների թվի, վորոնք արտազնաց աշխատանքի
մասին պայմանագրեր կկնքեն տնտմարմինների հետ:

13. ՆՍՀՄ-ի Հողօրդիոմատին և դաշնակից հան-
րապետութեանների ժողկոմխորհրդին հանձնարար-
վում է գյուղատնտեսական մեքենաների գերազանց
ժառանգարում կազմակերպել այն կոլտնտեսութեան-
ների նկատմամբ, վորոնք զգալի քանակութեամբ ար-
տազնաց կոլտնտեսականներ կառանձնացնեն:

14. Դաշնակից հանրապետութեանների ժողկոմ-
խորհրդներին հանձնարարվում է այդպիսի կոլտնտեսու-
թյուններին գերազանցութեան տալ զպրոցներ և ու-
րիշ կուլտ-կրթական հիմնարկներ, մասերներ, մանկա-
կան տներ և այլն կազմակերպելիս:

15. Սոցիալիստական հիմնարկների (ճաշարաններ
և այլն) կազմակերպման համար միջոցներ հատկացնե-
լիս և այդպիսիք սարքավորելիս սպառողական կոոպե-
րացիան պարտավոր է գերազանցութեան տալ այն կոլ-
տնտեսութեաններին, վորոնք ամենից ավելի մեծ թվով
արտազնացներ են տալիս:

16. Սույն արտոնութեանները վաճառվում են այն

կոլտնտեսութիւնները, վորոնք կապահովեն բանւոր արտադնացներ առանձնադնելու կամ նրանց հավաքադրմանն ոժանդակելու մասին տնտեսական մարմիններէրի հետ կնքված պայմանադրերի իրական կատարումը:

III.

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱԳՆԱՅ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

17. Կլասով չափ իջեցնել վոչ-հողադործական վատակից տրվող դուրստնտեսական հարկը այն արտադնաց մենատնտեսների նկատմամբ, վորոնք բարեխրդճությամբ կատարում են իրենց պարտականութիւնները անամարմինների հանդէպ:

18. Արտադնաց մենատնտեսներն աշխատանքի վայրում ապահովվում են բնակարանով և պարենով, ինչպէս և ստանում են ուղեվորման ծախքերի հատուցումները և սրապահիկը, արտադնաց կոլտնտեսականներին համահավասար (հոդ. 9):

IV.

ԱՐՏԱԳՆԱՅՆԵՐԻ ՀԱՎԱՐԱԳՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

19. Իրենց արտադրական պլանները կազմելիս՝ կոլտնտեսութիւնները պետք է առանձին հաշիւ առնեն մասնադիտութիւն ունեցող կոլտնտեսականներին (ածխարդյունաբերական բանվորներ, տորֆադործներ, հյուաններ, առադձագործներ, քարտաշներ և այլն): Կոլտնտեսութիւնները այդ կոլտնտեսականներին հնարա-

վորութիւն պետք է տան արդյունաբերութիւն մեջ, տրանսպորտում, խորհանտեսութիւններում աշխատելու համար, կոլտնտեսութիւնն աշխատանքի համար նըրանցից թողնելով միայն ամենաանհրաժեշտ քանակութիւնը:

20. Կոլտնտեսութիւնների վարչութիւնները պարտավոր են արտադնաց աշխատանքի դնալու մասին կոլտնտեսականներից դիմում ստանալուն պէս անհապաղ նրանց տեղեկանքներ տալ այն մասին, վոր նրանք կոլտնտեսութիւնն անդամ են:

21. Արտադնաց աշխատանքի դնալու ցանկութիւն ունեցող կոլտնտեսականներին սպասեցնելու համար կոլտնտեսութիւնների վարչութիւնները պատասխանատւութիւն են յենթարկվում:

Կոլտնտեսութիւնները վարչութիւններին արգելվում է ժամկետը լրանալուց առաջ աշխատանքից յետ կանչել կոլտնտեսականներին:

22. ԽՍՀՄ-ի կոլտնտեսակենտրոնին հանձնարարվում է 10 որվա ընթացքում կոլտնտեսութիւններին տալ անհրաժեշտ ցուցմունքներ ընդհանուր արտադնացներ առանձնացնելու ու բանուժի հավաքագրման գործում տնտեսական մարմիններին ոժանդակելու մասին պայմանագրեր կնքելու և արտադնաց կոլտնտեսականների կողմից այդ պայմանագրերի չկատարման դեմ պայքարելու վերաբերյալ:

ԽՍՀՄԻՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. ԽՍՀ Միութեան որենսդրութեան մեջ մտցնել սույն վորոշումից բղխող հետեւյալ փոփոխութեանները.

1) 1931 թ. գյուղատնտեսական միասնական հարկի կանոնադրութեան (ԽՍՀ Միութեան Որենքների ժողովածու, 1931 թ., № 19, հոդ. 171) 26-րդ հոդվածի «գ» կետը լրացնել հետեւյալ բովանդակութեամբ.

«Գ) հարկումից լիովին ազատվում է տնտեսութեան չհանրայնացված մասը, ներառյալ նաև վոչ-հողագործական վաստակները, այն կոլտնտեսականների նկատմամբ, վորոնք կոնտրակտացիա յեն կապում աշխատելու պետական արդյունաբերութեան մեջ (այդ թվում՝ փայտամթերման, փայտի գետային փոխադրման, տորֆի մշակման և այլն), տրանսպորտում, խորհտնտեսութեաններում, պետական շինարարութեաններում, ինչպես և սպառողական ու բնակչինարարական կոոպերացիայի կառուցողական աշխատանքներում: Կոլտնտեսականները կղրկվեն այս արտոնութեաններից, յեթե կոնտրակտացիոն ժամկետի լրանալուց առաջ կթողնեն աշխատանքը»:

2) նույն կանոնադրութեան 64¹ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակութեամբ—Արտոնութեաններ արտադնացողներին:

«64¹. Յեթե արտադնաց մենատնտեսը կոնտրակ-

տացիա յե կապում աշխատելու պետական արդյունաբերութեան մեջ (այդ թվում՝ փայտամթերման, փայտի գետային փոխադրման, տորֆի մշակման և այլն), տրանսպորտում, խորհտնտեսութեաններում, պետական շինարարութեաններում, ինչպես և սպառողական ու բնակչինարարական կոոպերացիայի կառուցողական աշխատանքներում, ապա նրա տնտեսութեան գյուղատնտեսական միասնաբղը սահմանելիս՝ այն վաստակը, վորը ձեռք է բերված այս աշխատանքներում, կխովչափ հանվում է այն նորմաների նկատմամբ, վորոնք ցույց են տրված 47-րդ հոդվածում: Տնտեսական մարմնի հետ կնքած պայմանագիրը խախտելու դեպքում արտադնացը զրկվում է այս իրավունքից»:

3) Գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրութեան (ԽՍՀՄ-ի Որենքների ժողովածու, 1930 թ., № 24, հոդ. 255) 15-րդ հոդվածի ծանոթութեանը հաստատել հետեւյալ խմբագրութեամբ—ծանոթութեանը Արտադնաց զբաղմունքի միջոցով արտելի անդամների վաստակած դումարներից հասարակական Ֆոնդերին հատկացում է կատարվում աշխատավարձի 3-ից մինչև 10 տոկոսի չափով: Այս սահմաններում հատկացման չափը վորոշում է արտելը կամ կոլտնտմիավորումը:

Սակայն այս հատկացումներից զգատվում են այն արտադնացները, վորոնք կոնտրակտացիա յեն կապում աշխատելու պետական արդյունաբերութեան մեջ (այդ թվում՝ փայտամթերման, փայտի գետային փոխադրման, տորֆի մշակման և այլն), տրանսպորտում, խորհտնտեսութեաններում, պետական շինարարութեաններում, ինչպես և սպառողական ու բնակչինարարական




5
1991
11
26656
կողմերացիայի կառուցողական
տաղնաց կոլտնտեսականները կզ
թյունից, յեթե կոնտրակտացիոն
առաջ կթողնեն աշխատանքը» :

ԽՍՀ Միության Կենտրոնական
Գործադիր Կոմիտեի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության ժողովրդական
Կոմիսարների Խորհրդի նախագահ՝
Վ. ՄՈՒՆՅՈՎ, (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԽՍՀ Միության Կենտրոնական
Գործադիր Կոմիտեի Բարձուղար՝ Ա. ՅԵՆՈՒԿԻՉԵ

1991 թ. Հունիսի 30



ԳԻՆԸ 5 ԿՈՊ. (1/2 Վ.)

ОБ ОТХОДНИЧЕСТВЕ
(Постановл. ЦИК и СНК СССР)

Госиздат ССР Армении
Эривань—1991